ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-9/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ (ՀՄԱ)
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **11.12.2019թ.**
ժամը 9:30

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա.Նազարյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ գնդապետ Վ.Վահանյանը,
ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ.Անտոնյանը,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍԱ բաժնի գլխավոր մասնագետ Հ.Ավետիսյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ ՊՆ աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-9/5» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-9/5» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-9/5» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
6. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

(Մ.Ամիրյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-9/5» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանումը
1	Դելտա ՍՊԸ
2	Էմ Դի ընդ Դի Ըլայենս ՍՊԸ
3	Իմմունոֆարմ ՍՊԸ
4	Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ
5	ՎԻՈԼԱ ՍՊԸ
6	Լինարե ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-9/5» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

(Մ.Ամիրյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-9/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հետևյալ դեպքերի

-Ընթացակարգի հրավերում՝ 15-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում, նշվել է «լրակազմում առնվազն 100 թեսթ, դրական և բացասական ստուգիչների առկայություն, ներառված է նաև կաթոցիչ և լուծիչ, գործարանային փաթեթավորումով տուփ»

«ԴԵԼՏԱ» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի հրավերի N 1.1 հավելվածով՝ 15-րդ չափաբաժնի մասով, ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում նշվել է լրակազմում առնվազն 200 թեսթ, դրական և բացասական ստուգիչների առկայություն, ներառված է լուծիչ, գործարանային փաթեթավորումով տուփ:

«ԴԵԼՏԱ» ՍՊԸ-ի կողմից չի նշվել կաթոցիչի առկայության վերաբերյալ տեղեկատվություն:

-«ԼԻՆԱՐԵ» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի հրավերի N 1.1 հավելվածով՝ 10, 17 և 18-րդ չափաբաժինների մասով, ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերում նշված չեն ագլյուտինացիայի տևողությունը և ստուգիչների առկայության վերաբերյալ տեղեկությունը:

5-րդ չափաբաժնի մասով հրավերով նախատեսվել է «լրակազմում 200մլ ազդանյութ, 2x100; 1x200 կամ այլ համարժեք քանակի գործարանային փաթեթավորումով», սակայն մասնակցի կողմից նշվել է «Մեթոդ: ֆոտոմետրիկ, կինետիկ: Ֆորմատ: 2x100մլ+2x100մլ+ստանդարտ 1x3մլ: Ալիքի երկարությունը՝ 492նմ, 490-510 նմ: Ստուգվող նմուշը՝ արյան շիճուկ/մեզ: Պահպանման պայմանները՝ 15-25°C»:

«ԼԻՆԱՐԵ» ՍՊԸ-ի կողմից հստակ չի նշվել 1 լրակազմում պարունակվող ազդանյութի քանակը:

-Ընթացակարգի հրավերում՝ 16-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում, նշվել է «լրակազմում առնվազն 30 թեսթ: Զգայունությունը՝ նվազագույնը 99%: Սպեցիֆիկությունը՝ նվազագույնը 99 %: Թեստի տեսակը՝ կասետային (Cassette) գործարանային փաթեթավորումով տուփ:»

«ԷՄԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի հրավերի N 1.1 հավելվածով՝ 16-րդ չափաբաժնի մասով, ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում նշվել է Հեպատիտ B-ի վիրուսի նկատմամբ հակածինների որակ-հայտն-իմունոքրոմատոգրաֆիկ թեստեր ամբողջական արյան մեջ, շիճուկում, պլազմայում:

Կիրառված են ռեկոմբինանտային հակածիններ: %: Թեստի տեսակը՝ կասետային (Cassette) գործարանային փաթեթավորումով տուփ: ISO վկայականի առկայություն:

Պահպ. պայմանները՝ 2-30oC, Թեստի տևողությունը 10 րոպե: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին»:

«ԷՄԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ի կողմից չի նշվել լրակազմում առկա թեսթերի քանակը, Զգայունության և Սպեցիֆիկության վերաբերյալ տեղեկատվությունները:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի/Կարգ/ 32-րդ կետի 2) ենթակետի մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Սակայն «Իմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի աղյուսակում բացակայում է շահույթ-ի համար նախատեսված սյունակը:

13.12.2019թ. Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը իսկ գնումների համակարգողը ծանուցեց մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը /16.12.2019թ.-ի ժամը 18:00-ն/ շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Մասնակիցները ուղարկել են պահանջվող փաստաթղթերը՝ բացառությամբ «ԴԵԼՏԱ» ՍՊԸ-ի:

Համաձայն Կարգի 42-րդ կետի եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Համաձայն Կարգի 32-րդ կետի 19) ենթակետի եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետև՝ Օրենք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 45-րդ կետի համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

17.12.2019թ. Հաշվի առնելով վերոնշյալը գնահատող հանձնաժողովը որոշեց «ԴԵԼՏԱ» ՍՊԸ-ի հայտը 15-րդ չափաբաժնի մասով մերժել և մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ուղարկել լիազորված մարմին, «ԴԵԼՏԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Համաձայն Կարգի 40-րդ կետի 4) ենթակետի հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Հաշվի առնելով վերոնշյալը գնահատող հանձնաժողովը որոշեց «Իմունոֆարմ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

2.4 Մասնակիցների /բացառությամբ «Իմունոֆարմ» ՍՊԸ-ի և 15-րդ չափաբաժնի մասով «ԴԵԼՏԱ» ՍՊԸ-ի/ կողմից հայտերով ներկայացրած փաստաթղթերը՝ այդ թվում տեխնիկական բնութագրերը, գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/5» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի հրավերի պայմաններին (պահանջներին) համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Մ.Ամիրյան)

3.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան /բացառությամբ «Իմունոֆարմ» ՍՊԸ-ի և 15-րդ չափաբաժնի մասով «ԴԵԼՏԱ» ՍՊԸ-ի/ գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Ներկայացվում է կից Հավելված-ով

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են **/ճիշտ են/**:

3.3 17.12.2019թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/5» ծածկագրով ընթացակարգի թիվ 3, 6-10, 12, 30, 31, 33-38 և 45-րդ չափաբաժինների մասով հրավերի պահանջներին համապատասխան գնահատված հայտ ներկայացրած մասնակիցները միակն են նշված յուրաքանչյուր չափաբաժինների մասով, որոնց տնօրենները կամ նրանց կողմից լիազորված անձինք ներկա են եղել նիստին և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությունը, որոշեց ընտրված մասնակիցներին որոշելու նպատակով առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարել միաժամանակյա բանակցություններ:

Բանակցությունների արդյունքում «ՎԻՈԼԱ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը 7-րդ չափաբաժնի մասով ներկայացրեց նոր գնային առաջարկ՝ 60 000 ՀՀ դրամ:

Բանակցությունների արդյունքում մյուս մասնակիցները հրաժարվեցին նվազեցնել առաջարկած գները և նրանց գնային առաջարկները մնացին անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/5» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Մ.Ամիրյան)

4.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը՝ **17.12.2019թ.**-ին, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 3, 7, 30, 31, 33-37-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՎԻՈԼԱ» ՍՊԸ-ին**, 6, 8, 9, 12-րդ չափաբաժինների մասով՝ **«ԴԵԼՏԱ» ՍՊԸ-ին,** 10-րդ չափաբաժնի մասով՝ **«ԼԻՆԱՐԵ» ՍՊԸ**-ին, 38, 44-րդ չափաբաժինների մասով՝ **«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ**-ին:

4.2 Քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/5» ծածկագրով ընթացակարգի թիվ 2, 11, 13, 32, 39-43, 45-88 չափաբաժինների մասով ոչ մի հայտ չի ներկայացվել, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները, որոշեց սույն ընթացակարգը նշված չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

4.3 Քանի որ սույն ընթացակարգի թիվ 1, 4, 5, 15-21, 26, 29-րդ չափաբաժինների մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անհրաժեշտ է կիրառել անգործության հնգօրյա ժամկետ, իսկ պայմանագիրը (համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի) հնարավոր կլինի կնքել ոչ շուտ, քան այդ ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը, ուստի նշված չափաբաժնի մասով պայմանագիր կարող է կնքվել ոչ շուտ, քան 25.12.2019թ.-ը, մինչդեռ սույն ընթացակարգի հրավերով ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանված 23.12.2019թ.-ը:

ՀՀ կառավարության 15.06.2018թ. N 706-Ն որոշմամբ հաստատված «Բյուջեների կատարման» կարգի 84-րդ կետի համաձայն՝ տվյալ տարվա դեկտեմբերի 20-ից հետո հիմնարկներին, որոնց հիմնադիրը Հայաստանի Հանրապետության կառավարությունն է (ՀՀ պաշտպանության նախարարության հիմնադիրը ՀՀ կառավարությունն է՝ համաձայն «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի), չի թույլատրվում գործարքներով ստանձնել ֆինանսական նոր պարտավորություններ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ համաձայնեցված դեպքերի:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն ընթացակարգի թիվ 1, 4, 5, 15-21, 26, 29-րդ չափաբաժինների մասով մինչև 20.12.2019թ.-ը հնարավոր չի լինի պայմանագիր կնքել՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով սույն ընթացակարգը թիվ 1, 4, 5, 15-21, 26, 29-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

4.4 Քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/5» ծածկագրով ընթացակարգի թիվ 22-24, 27, 28 չափաբաժինների մասով հայտ ներկայացրած միակ մասնակցի /**«ԼԻՆԱՐԵ» ՍՊԸ**/ հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար և մերժվել է, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները, որոշեց սույն ընթացակարգը նշված չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

4.5 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/5» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.6 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/5» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.7 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/5» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներին՝ 3, 7, 30, 31, 33-37, 6, 8, 9, 12, 38, 44, 10 չափաբաժիների մասով, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Մ.Ամիրյան)

5.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

6. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Մ.Ամիրյան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ.Ամիրյան)

7.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/5» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 17:00-ն, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) _____ Ա.Նազարյան

Գնահատող _____ Վ.Վահանյան

Գնահատող _____ Գ.Անտոնյան

Գնահատող _____ Հ.Ավետիսյան

Գնումները համակարգող _____ Մ.Ամիրյան